ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«__»_____ 2026թ. **N_____-Ն**

ՈՐՈՇՈՒՄ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԵՎ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՎՃԱՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 3-րդ մասով, 245-րդ հոդվածի 2-րդ մասով և Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N 690-Ն որոշմամբ.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի վարչական տարածքում սեփականության իրավունքով ֆիզիկական անձանց պատկանող, գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող բնակելի նշանակության շենքերի, շինությունների և փոխադրամիջոցների գույքահարկի մինչև 2018 թվականը ներառյալ հարկը սահմանված ժամկետում չվճարելու հետևանքով հաշվարկված և չվճարված տույժերի մասով սահմանել արտոնություն՝ հարկ վճարողին ազատելով սահմանված կարգով հաշվարկված և չվճարված տույժերից, եթե առկա չեն գույքահարկի մինչև 2018 թվականը ներառյալ հաշվարկված հարկի (ապառքի) մասով պարտավորություններ:

2. Երևան քաղաքի վարչական տարածքում սեփականության իրավունքով ֆիզիկական անձանց պատկանող, հողի հարկով հարկման օբյեկտ հանդիսացող հողերի մինչև 2018 թվականը ներառյալ հարկը սահմանված ժամկետում չվճարելու հետևանքով հաշվարկված և չվճարված տույժերի մասով սահմանել արտոնություն՝ հարկ վճարողին ազատելով սահմանված կարգով հաշվարկված և չվճարված տույժերից, եթե առկա չեն հողի հարկի մինչև 2018 թվականը ներառյալ հաշվարկված հարկի (ապառքի) մասով պարտավորություններ:

3. Երևան քաղաքի վարչական տարածքում ֆիզիկական անձանց անվամբ գրանցված և մինչև 2015 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ օտարված և օտարող ֆիզիկական անձի սեփականության իրավունքի դադարումը պետական լիազոր մարմնի կողմից գրանցված փոխադրամիջոցների մասով հաշվարկված և չվճարված հարկի (ապառքի) և հարկը սահմանված ժամկետում չվճարելու հետևանքով հաշվարկված և չվճարված տույժերի մասով սահմանել արտոնություն՝ հարկ վճարողին ազատելով հաշվարկված և չվճարված հարկային պարտավորությունների և հաշվարկված և չվճարված տույժերի վճարումից:

4. Սահմանել, որ սույն որոշման 1-ին և 2-րդ կետերով նախատեսված արտոնությունները համարվում են տրամադրված, եթե նույն կետերով սահմանված հարկի (ապառքի) մասով հարկային պարտավորությունները կատարվել են մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ և պարտավորությունների կատարումը հիմնավորող փաստաթղթերը հարկ վճարողի կողմից ներկայացվել են Երևանի քաղաքապետին:

5. Առաջարկել Երևանի քաղաքապետին սույն որոշման 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված դեպքերում արտոնությունը համարել տրամադրված և հարկ վճարողի փոխարեն համայնքի բյուջեից վճարում կատարել միայն հարկ վճարողի կողմից սույն որոշմամբ նախատեսված արտոնությունների կիրառման համար անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները Երևանի քաղաքապետին ներկայացնելու դեպքում:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N 690-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու 2026 թվականի ապրիլի 21-ի N - Ն որոշումն ուժի մեջ մտնելու օրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԵՎ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՎՃԱՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ընթացիկ իրավիճակը, իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը, առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

Նախագծի մշակման անհրաժեշտությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, մասնավորապես՝

մինչև 12.11.2013 թվականը գործող իրավակարգավորումներով «Գույքահարկի մասին» Օրենքի /այսուհետ՝ օրենք/ դրույթների համաձայն ֆիզիկական անձանց պատկանող հարկվող օբյեկտը կամ դրա մի մասն օտարելու դեպքում՝ նոր սեփականատիրոջն են անցել օտարման օրվա դրությամբ տվյալ հարկվող օբյեկտի համար չմարված հարկային պարտավորությունները:

Մինչդեռ 12.11.2013 թվականի ՀՕ-113-Ն ««Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ եվ փոփոխություններ կատարելու մասին» օրենքի դրույթների համաձայն՝ Օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասում կատարվել են փոփոխություններ և «հարկվող օբյեկտը» բառից հետո լրացվել է «(բացառությամբ փոխադրամիջոցների)» բառերով, իսկ 13-րդ հոդվածի 4-րդ մասի առաջին պարբերությունը խմբագրվել է և շարադրվել, որ ֆիզիկական անձինք տարեկան տեխնիկական զննության ենթակա փոխադրամիջոցների համար գույքահարկի գծով հարկային պարտավորություններն ամբողջությամբ կատարում են մինչև փոխադրամիջոցները տվյալ տարվա տեխնիկական զննության ներկայացնելը, իսկ փոխադրամիջոցի օտարման դեպքում՝ մինչև փոխադրամիջոցի օտարման պայմանագրից ծագող սեփականության իրավունքը գրանցելը:

Մինչ վերոնշված իրավակարգավորումների ուժի մեջ մտնելը, առկա են եղել բազմաթիվ դեպքեր, երբ փոխադրամիջոցները օտարվել են առանց գույքահարկի պարտավորությունների ամբողջական մարման, առանց առուվաճառքի պայմանագրի իրավունքի պետական գրանցման և 2014 թվականից հետո առուվաճառքի ենթարկվելու արդյունքում, հնարավոր չի լինում գոյացած գույքահարկի պարտավորությունների կատարման պահանջ ներկայացնել նոր սեփականատիրոջը:

Օրենքում 2013 թվականի նոյեմբերին փոփոխություն կատարելու հետո 09.09.2010 թվականի ՀՀ կառավարության «Պետական գրանցման ենթակա տրանսպորտային միջոցների տեսակների ցանկը, տրանսպորտային միջոցների պետական հաշվառման կարգը, պետական գրանցման և պետական հաշվառման համար պարտադիր ներկայացվող փաստաթղթերի ցանկերը, տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի, պետական հաշվառման ազգային ու միջազգային վկայագրերի և «ժամանակավոր ներմուծում» մաքսային ընթացակարգով Հայաստանի Հանրապետություն ներմուծված տրանսպորտային միջոցների հաշվառման վկայագրի ձևերը, «ժամանակավոր ներմուծում» մաքսային ընթացակարգով Հայաստանի Հանրապետություն

ներմուծված տրանսպորտային միջոցների հաշվառման կարգը, հաշվառման համարանիշերին ներկայացվող պահանջները, ինչպես նաև տրանսպորտային միջոցների համարանիշերի հաշվառման ու հատկացման կարգը սահմանելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 30-ի N 1853-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի N 1041-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1251-Ն որոշման մեջ 27.03.2014 թվականի ՀՀ կառավարության հ. 342-Ն որոշմամբ կատարվել է փոփոխություն և տրանսպորտային միջոցը գրանցելու դեպքում ներկայացվող փաստաթղթերի ցանկում ավելացվել է, որպես պարտադիր պահանջ, փոխադրամիջոցի գույքահարկի պարտավորությունների ամբողջական կատարման մասին տեղեկանքը:

Սույն նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ ՀՀ կառավարության 25.06.2015 թվականի «Տրանսպորտային միջոցները խոտանված համարելու և տրանսպորտային միջոցների սեփականության իրավունքի պետական գրանցման և պետական հաշվառման (վերահաշվառման) համակարգչային շտեմարանից հանելու մասին» N 708-Ա որոշման համաձայն՝ այն տրանսպորտային միջոցները, որոնց համար երբևէ չի կնքվել ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության պայմանագիր, և այդ տրանսպորտային միջոցով կատարված՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 129.2-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտումից բացի որևէ այլ իրավախախտման դեպք 2011 թվականի հունվարի 1-ից հետո չի արձանագրվել, համարվել են 2010 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ խոտանված և հանվել են տրանսպորտային միջոցների սեփականության իրավունքի պետական գրանցման և պետական հաշվառման (վերահաշվառման) համակարգչային շտեմարանի գործող հատվածից: Սակայն 2014 թվականի հունվարի, փետրվար ամիսներին ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության կողմից քաղաքացիներին ուղարկվել են, տրանսպորտային միջոցի համար կնքված ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության գործող պայմանագիր չունենալու վերաբերյալ իրավախախտման ծանուցումներ, որոնց արդյունքում քաղաքացիները մինչև 2014 թվականի ապրիլ ամիսը խոտանել են սեփականության իրավունքով պատկանող փոխադրամիջոցները և դուրս մնացել որոշմամբ հաստատված շրջանակից, քանի որ որոշմամբ համարել են խոտանված և հանվել պետական հաշվառման (վերահաշվառման) համակարգչային շտեմարանի գործող հատվածից:

Ելնելով վերոգրյալից Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Երևան քաղաքի ավագանու կողմից անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցի գույքահարկի արտոնություններ սահմանելու և համայնքի բյուջեից վճարում կատարելու մասին» որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ